ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 նոյեմբերի 2021թվականի N 81-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>>օրենքի 27-րդ հոդվածի 2.1-րդ և 102-րդ հոդվածի3.2-րդ մասերի, հիմք ընդունելով Կոտայքի մարզպետի 2021 թվականի N 408-Ա որոշումը՝որոշում եմ.

1.Հրաչյա Գագիկի Սարգսյանին 2021թվականի նոյեմբերի 11-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝մինչև օրենքով սահմանված կարգով նորընտիր համայնքի ղեկավարի լիազորությունների ստանձնումը:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

20 21թ. նոյեմբերի 10
գ.Գեղադիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 նոյեմբերի 2021թվականի N 82-Ա

ՄՐՑՈՒԹԱՑԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանով հաստատված կարգի 7-րդ կետի դրույթներով,հիմք ընդունելով Գեղադիր համայնքի ավագանու 2021թվականի նոյեմբերի 8-ի N36-Ա որոշումը,Կոտայքի մարզպետի 2021թվականի նոյեմբերի 16-ի N01/08.1/07314-2021 և <<Գեղադիր միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ի տնօրենի 2021 թվականի նոյեմբերի 9-ի N 32 գրությունները , որոշում եմ.

1.2021թվականի նոյեմբերի 22-ին <<Գեղադիր համայնքի մանկապարտեզ >>համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու մրցույթի նախապատրաստման,անցկացման և արդյունքների ամփոփման համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Գևորգյան Միեր - Կոտայքի մարզպետարանի ներկայացուցիչ
Թումոյան Ռոբերտ - Կոտայքի մարզպետարանի ներկայացուցիչ
Սարգսյան Հրաչյա - համայնքի ղեկավարի պաշտոնակատար
Ավետիսյան Զավեն -<<Գեղադիր միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ի տնօրեն:

Հանձնաժողովի նախագահ նշանակել համայնքի ղեկավարի պաշտոնակատար Հրաչյա Սարգսյանին

Հանձնաժողովի քարտուղար նշանակել <<Գեղադիր միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ի տնօրեն Զավեն Ավետիսյանին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Հ.ՍԱՐԳՍՅԱՆ

20 21թ. նոյեմբերի 19
գ.Գեղադիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 նոյեմբերի 2021թվականի N 83-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ<<ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>>ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ կետի,Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով 2021թվականի նոյեմբերի 22-ին<<Գեղադիր համայնքի մանկապարտեզ>>ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի եզրակացությունը և հաշվի առնելով Մարինե Գրիգորյանի դիմումը՝որոշում եմ.

1.<<Գեղադիր համայնքի մանկապարտեզ>>ՀՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում նշանակել 2021թվականի նոյեմբերի 22-ին Գեղադիր համայնքում անցկացված մրցույթում հաղթող ճանաչված Մարինե Հովակիմի Գրիգորյանին:
2.Մարինե Գրիգորյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր:
3.Վճարումն իրականացնել Գեղադիր համայնքի ավագանու 2021թվականի սեպտեմբերի 28-ի N 28-Ա որոշմամբ հաստատված հաստիքացուցակով:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

20 21 թ. նոյեմբերի 23
գ.Գեղադիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 նոյեմբերի 2021թվականի N 84-Ա

ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով,77-րդ հոդվածով՝ որոշում եմ.

1.Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը գույքագրման ենթարկելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.
Թամար Մուդոյան ,աշխատակազմի քարտուղար - հանձնաժողովի նախագահ,
Շողիկ Թադևոսյան, առաջին կարգի մասնագետ - հանձնաժողովի անդամ,
Զավեն Ավետիսյան Գեղադիր միջնակարգ դպրոցի տնօրեն - հանձնաժողովի անդամ:
2.Գույքագրումն սկսել 2021թվականի նոյեմբերի 23-ին ,ավարտել նոյեմբերի 30-ին:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

20 21 թ. նոյեմբերի 23
գ.Գեղադիր